ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՎԱՇՎՏՄ-ԳՀԾՁԲ-19/12-1»

ք. Երևան «07» 08 2019թ.

Կարչապետի աշխատակազմն, ի դեմս գործերի կառավարչի պաշտոնակատար Վ.Պապիկյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գարանտսերվիս» ՍՊԸ ն, ի դեմս տնօրեն Մ. Նիկողոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը** (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Բննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության **առավելագույն գինը կազմում է 900000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի 1 և N 1.1 հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո պայմանագրով սահմանված Պատվիրատուի իրավունքները և պարտավորությունները փոխանցվում են Շուկայի վերահսկողության տեսչական մարմնին՝ բացառությամբ ֆինանսական գործառույթների:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վարչապետի աշխատակազմ	«Գարանտսերվիս» ՍՊԸ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,	0052,ք.Երևան,Թբիլիսյան խճ 20
Կառավարական տուն, 1	Բանկ: "Կոնվերսբանկ "ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական գանձարան	Հ/Հ 193004674290
Հ/Հ 90001024099	ՀՎՀՀ '00840437
ՀՎՀՀ 02505564	
(ստորագրություն)	Տնօրեն Ս.Նիկողոսյան (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«07» 08 2019 թ. կնքված
«ԿԱՇԿՏՄ-ԳՀԵՁԲ-19/12-1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
Իրավերով նախատեսված չափաբաժնի հատորը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Ընդհանուր առավելագույն գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	50111130/1	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	դրամ	900000	1	ք. Երևան, մատակարարի նշված հասցեում	Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառվելուց հետո մինչև 2019թ. Դեկտեմբերի 15-ը

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան փվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 900011024099
ԱՎՀՀ 02505254

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Գարանտսերվիս» ՍՊԸ
0052,ք.Երևան,Թբիլիսյան խճ 20
Բանկ: "Կոնվերսբանկ "ՓԲԸ
ՀՎՀՀ 193004674290
ՀԿՀՀ '00840437

Տնօրեն Ս.Նիկողոսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

00840437
«ԳԱՐԱՆՏՍԵՐՎԻՍ»
"ГАРАНТСЕРВИС"
"GARANTSERVIS"

Հավելված N 1.1
«07» 08 2019 թ. կնքված
«ԿԱՇԿՏՄ-ԳՀԾՁԲ-19/12-1» ծածկագրով պայմանագրի

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՑՈՒՑԱԿ

ՀՀ	Ընթացիկ,միջին և հիմնական նորոգման աշխատանքների անվանումները	Այլ պետությունների արտադրության մեքենաներ (TOYOTA COROLLA 2015թ., TOYOTA COROLLA 2014թ., TOYOTA CAMRY 2010թ.)
		միավոր գինը /ՀՀ դրամ /
1	**SU-1 ներառվող ծառայությունների անվանում**	
2	Բռնկման համակարգի ստուգում	0
3	Սառեցման համակարգի ստուգում	0
4	Յուղման համակարգի ստուգում	0
5	Արտացման համակարգի ստուգում	0
6	Կցորդման համակարգի ստուգում	0
7	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	0
8	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	0
9	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	0
10	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	0
11	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	0
12	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	0
13	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	0
14	ABS համակարգի ստուգում	0
15	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	0
16	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	0
17	Թափքի վիճակի ստուգում	0
18	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	0
19	**SU-2 ներառվող ծառայությունների անվանումը**	
20	Շարժիչի հանում և տեղադրում	30,000
21	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում	0
22	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
23	Նույնը ԱՓՏ-ի դեպքում.	0
24	Շարժիչի վերանորոգում	80,000
25	Նույնը DOHC դեպքում	0
26	Նույնը V6-ի դեպքում	0
27	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	5,000

28	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	0
29	Նույնը աջի համար (V6)	0
30	Նույնը ձախի համար (V6)	0
31	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	0
32	Նույնը աջի համար (V6)	30,000
33	Նույնը ձախի համար (V6)	0
34	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	0
35	Շարժիչի գլխիկի վերանորոգում	0
36	Փականի խցուկի փոխարինում	30,000
37	Նույնը V6-ի դեպքում	0
38	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	0
39	Նույնը V6-ի ձախի դեպքում	0
40	Նույնը V6-ի աջի դեպքում	0
41	Նույնը DOHC դեպքում	0
42	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	0
43	Հրիչների փոխարինում SOHC	0
44	Նույնը DOHC դեպքում	0
45	Ատամնավոր փոկի փոխարինում	0
46	Նույնը DOHC դեպքում	0
47	Նույնը V6-ի դեպքում	0
48	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	0
49	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
50	Նույնը DOHC դեպքում	0
51	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
52	Նույնը V6-ի դեպքում	0
53	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
54	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	0
55	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	0
56	Մխոցային օղակների փոխարինում	0
57	Նույնը DOHC դեպքում	0
58	Նույնը V6-ի դեպքում	0
59	Թափանիվի հանում և տեղադրում	0
60	**2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ**	
61	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	500
62	Յուղի պոմպի փոխարինում	0
63	Նույնը DOHC դեպքում	0
64	Նույնը V6-ի դեպքում	0
65	Ղեկավարման բլոկի վերանորոգում	0
66	Բռնկման կարգավորում	3,000
67	CO կարգավորում	0
68	Խարնարակի հանում և տեղադրում	0
69	Խարնարակի վերանորոգում	0
70	Օդի զտիչի փոխարինում	500
71	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	0
72	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	5,000
73	Բենզամղիչի փոխարինում	6,000

74	Վառելիքի զտիչի փոխարինում	6,000
75	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	0
76	Տրամսյորի հանում և տեղադրում	0
77	Տրամսյորի վերանորոգում	0
78	**3. Սառեցման և արտածման համակարգ**	
79	Հովհարի փոկի հանում և տեղադրում	3,000
80	Հովհարի հանում և տեղադրում	0
81	Ռադիատորի հանում և տեղադրում	9,000
82	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
83	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	0
84	Ռադիատորի վերանորոգում	0
85	Թերմոստատի փոխարինում	4,000
86	Ջրի պոմպի փոխարինում	20,000
87	Նույնը DOHC և V-6 դեպքում	0
88	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
89	Ջրի պոմպի վերանորոգում	0
90	Նույնը DOHC դեպքում	0
91	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
92	Ընդարձակող բաքի փոխարինում	0
93	Խլարարի հանում և տեղադրում	0
94	Նույնը DOHC դեպքում	0
95	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	2,000
96	**4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ**	
97	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	0
98	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	0
99	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	0
100	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	0
101	Կցորդման ճուպանի հանում և տեղադրում	0
102	ՓՏ-ի հանում և տեղադրում	0
103	ՓՏ-ի վերանորոգում	0
104	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	0
105	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	0
106	Վագրաչափի շարժաբերի փոխարինում	0
107	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	0
108	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	0
109	Նույնը V6-ի համար	0
110	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	30,000
111	Նույնը V6-ի համար	0
112	ԱՓՏ-ի վերանորոգում	80,000
113	Նույնը V6-ի համար	0
114	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	12,000
115	**5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ**	
116	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	0
117	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով	0
118	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	0
119	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	0

120	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգ.	0
121	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	0
122	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում	0
123	**6. Առջևի և հետևի կամրջակներ**	
124	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	0
125	Առջևի կամ հետևի կամրջ. լիկատար բանդում և հավաքում	0
126	Առջևի կամ հետևի կամրջ. մասնակի բանդում և հավաքում	0
127	Առջևի կամ հետևի կամրջ. կիսասոնու հանում և տեղադր.	0
128	Կիսասոնու առանցքակալի փոխարինում	0
129	**7. Կախոց**	
130	Առջևի կախոցի լիակատար բանդում և հավաքում	0
131	Տրավերսի հանում և տեղադրում	0
132	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում	6,000
133	Անվակունդի առանցքակալի փոխարինում	12,000
134	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	0
135	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	0
136	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	0
137	Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում	0
138	Ձախ կամ աջ հոդակապի առանցքակալների փոխարինում	0
139	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	5,000
140	Զսպանակի հանում և տեղադրում	0
141	Զսպակի հանում և տեղադրում	0
142	Զսպակի վռանների փոխարինում	0
143	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	7,000
144	Ներքևի լծակի հանում և տեղադրում	9,000
145	Ներքևի լծակի վռանների փոխարինում	3,000
146	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	8,000
147	Միջին ձգանի հանում և տեղադրում	0
148	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	0
149	Վերևի լծակի հանում և տեղադրում	0
150	Վերևի լծակի վռանների փոխարինում	0
151	Գնդե հոդակապերի փոխարինում	5,000
152	Ծայրակաների հանում և տեղադրում	5,000
153	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	0
154	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	4,000
155	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	0
156	Հետևի զսպանակի փոխարինում	0
157	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	7,000
158	Հետևի ձգածողի հանում և տեղադրում	0
159	Հետևի երկաթածողի հանում և տեղադրում	0
160	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	4,000

161	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	0
162	Անկյունագծային լծակի լվանների փոխարինում	0
163	Անվաբացքի կարգավորում	6,000
164	Զոդման աշխատանքներ 1 քառ.սմ համար	2,000
165	**8. Ղեկային մեխանիզմ**	
166	Ղեկային կալոնի հանում և տեղադրում	15,000
167	Նույնը V6-ի համար	0
168	Ղեկային կալոնի վերանորոգում	20,000
169	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	0
170	ՂԿ-ի հոդակապերի հանում և տեղադրում	0
171	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	0
172	Նույնը DOHC դեպքում	0
173	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	0
174	Նույնը DOHC դեպքում	0
175	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում	0
176	Նույնը DOHC դեպքում	0
177	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
178	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	0
179	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	0
180	**9. Արգելակային համակարգ**	
181	Գլխ. գլանի հանում և տեղադրում	0
182	Գլխ. գլանի վերանորոգում	0
183	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	0
184	Բանվ. գլանի հանում և տեղադրում	0
185	Բանվ. գլանի վերանորոգում	0
186	Արգելակային համակարգի օդահանում	3,000
187	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	3,000
188	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	3,000
189	Առջևի սուպպորտի վերանորոգում	3,000
190	Հետևի սուպպորտի վերանորոգում	3,000
191	Արգելակային փողրակի փոխարինում	3,000
192	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	5,000
193	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	5,000
194	Հետևի կոճղակների փոխարինում	0
195	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	3,000
196	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	3,000
197	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	0
198	ABS-ի հանում և տեղադրում	0
199	ABS-ի վերանորոգում	0
200	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	0
201	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	0
202	**10. Էլեկտրասարքավորում**	
203	Էլեկտրասարքավորման վերանորոգում	5,000
204	Ձափիչ սարքերի հանում և տեղադրում	0
205	Գեներատորի հանում և տեղադրում	5,000
206	Նույնը V6-ի դեպքում	0

207	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում	0
208	Գեներատորի վերանորոգում	5,000
209	Մեկնարկիչի հանում և տեղադրում	5,000
210	Մեկնարկիչի վերանորոգում	5,000
211	Առջևի լապտերի հանում և տեղադրում	0
212	Հետևի լապտերի հանում և տեղադրում	0
213	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	5,000
214	Վազքաչափի հանում և տեղադրում	0
215	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում	0
216	Սաքերի պանելի հանում և տեղադրում	25,000
217	Արագաչափի հանում և տեղադրում	0
218	Ազդանշանի հանում և տեղադրում	0
219	Ապակելվացիչի շարժիչի հանում և տեղադրում	3,000
220	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	0
221	Ազդանշանային համակարգի տեղադրում	0
222	Մագնիտոլայի տեղադրում	0
223	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	0
224	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	10,000
225	Էլ/հաղորդալարերի հիմն. խուրցի հանում և տեղադրում	0
226	Էլ/հաղորդալարերի երկրորդ. խուրցի հանում և տեղադրում	0
227	Էլեկտրական տվիչների փոխարինում	3,000
228	Էլեկտրական անջատիչների փոխարինում	0
229	Վառոցքի մոմերի փոխարինում	3,000
230	Կոնդիցիոների լիցքավորում	20,000
231	Կոնդիցիոների վերանորոգում	0
232	**11. Այլ ծառայություններ**	
233	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1 քառ.դմ - ի համար	3,000
234	Ավտոմեքենայի լվացում	0
235	Անիվի հանում և տեղադրում	500
236	Անվադողի վերանորոգում	1,000
237	Անիվի բալանսավորում	1,000
238	Անիվի վաց	0
239	CO զոդման աշխատանքներ, գին 1 քառ.սմ - ի համար	0
240	Խառատային աշխատանքներ	0
241	Փականագործի աշխատանքներ	8,000
242	Քարշարկի ծառայություն գին 1կմ, համար	250
243	**SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները**	
244	**1.Շարժիչ**	
245	Շարժիչի բլոկ	0
246	Շարժիչի գլխիկ	0
247	Բարձիկ	65,000
248	Շարժիչի գլխիկի միջադիր	25,000

249	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	0
250	Շարժիչի բաշխիչ լիսեռ	0
251	Շարժիչի փական դուրս մղող	0
252	Շարժիչի փական ներս մղող	0
253	Շարժիչի փականի խցուկ	0
254	Ծնկաձև լիսեռ	0
255	Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի	5,000
256	Ծնկաձև լիսեռի խցուկ հետևի	6,000
257	Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ	35,000
258	Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ	28,000
259	Հենակային տափողակ	0
260	Մխոց	0
261	Մխոցային օղակներ	58,000
262	Ատամնանիվ	0
263	Ատամնավոր փոկ	0
264	Շղթա	56,000
265	Հիդրոծգան	42,000
266	Հրիչ	10
267	Հիդրոհրիչ	0
268	Բաշխակ	0
269	Հանգստարար	22,000
270	Թափանիվ	0
271	Թափանիվի պսակ	0
272	Խցուկ բաշխիչ լիսեռի	7,500
273	Ճկիվ	0
274	Շարժաթև	0
275	Կարտերի միջադիր	0
276	Միջադիր	12,000
277	**2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ**	
278	Յուղ շարժիչի հանքային, 1 լիտր	10
279	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր	4,000
280	Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր	6,000
281	Յուղի զտիչ	8,500
282	Յուղի պոմպ	0
283	Յուղի պոմպի շարժաբեր	0
284	Յուղի ռադիատոր	0
285	Յուղի փողրակ	0
286	Յուղի ծորակ	0
287	Վառոցքի մոմ	9,000
288	Բենզոբաք	0
289	Խառնարակ	0
290	Խառնարակի վերանորոգման հավաքածու	0
291	Ինժեկտորի ֆորսունկա	0
292	Վառելանյութի մղիչ էլեկտրական	85,000
293	Վառելանյութի մղիչ մեխանիկական	0
294	Վառելանյութի զտիչ	55,000

295	Վառելանյութի զտիչ նուրբ մաքրման	0
296	Վառելանյութի փողրակ	0
297	Աքսելերատորի ճոպան	0
298	Օդի զտիչ	13,000
299	Ջերմաստիճանային տվիչ	0
300	Յուղի տվիչ	0
301	Բաշխիչ լիսեռի տվիչ	0
302	Օդի ծախսի տվիչ	0
303	Արագաչափի տվիչ	0
304	Հովհարի տվիչ	0
305	Ջրի տվիչ	0
306	Բենզոբաքի տվիչ	0
307	Մարման ընթացքի կարգավորիչ	0
308	Մարման ընթացքի տվիչ	0
309	Ղեկավարման համակարգիչ	0
310	Պարապ ընթացքի տվիչ	0
311	Դրոսելային փականի տվիչ	0
312	Թթվածնի տվիչ	0
313	**3. Սառեցման և արտածման համակարգ**	
314	Հովհարի փոկ	0
315	Հովհար	0
316	Ռադիատոր	105,000
317	Ընդարձակող բաք	0
318	Ռադիատորի փողրակ	21,000
319	Թերմոստատ	18,000
320	Ջրի պոմպ	58,000
321	Ջրի պոմպի առանցքակալ	0
322	Ջրի պոմպի թևակ	0
323	Սառեցման հեղուկ 1 լիտր	3,500
324	Ջրի պոմպի սոնանիվ	0
325	Հոլովակ	45,000
326	Փոկ	38,000
327	Փոկ կոնդիցիոների	0
328	Ծորակ	0
329	Խլարարի ներդիր	0
330	Խլարարի կախոց	0
331	Կրոնշտեյն	10
332	Անուր (Խամուտ)	500
333	Խլարար	0
334	Ռեզոնատոր	0
335	Վառարանի ռադիատոր	65,000
336	**4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ**	
337	Կցորդման բանվորական գլան	0
338	Կցորդման գլխավոր գլան	0
339	Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու	0
340	Կցորդման տանող սկավառակ	0

341	Կցորդման տարվող սկավառակ	0
342	Կցորդման առանցքակալ	0
343	Կցորդման փողրակ	0
344	Փոխանցման տուփ	0
345	ՓՏ-ի առջևի խցուկ	0
346	ՓՏ-ի հետևի խցուկ	0
347	ՓՏ-ի առանցքակալ	0
348	ՓՏ-ի առաջնային լիսեռ	0
349	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	0
350	ՓՏ-ի եղանիկ	0
351	ՓՏ-ի ատամնանիվ	0
352	Համաժամիչ	0
353	Մուֆտ	0
354	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	0
355	ԱՓՏ-ի զտիչ	32,000
356	ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու	85,000
357	ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	95,000
358	Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր	0
359	ԱՓՏ յուղ, 1 լիտր	18,000
360	ՓՏ-ի առաջնային լիսեռ	0
361	Հերմետիկ	3,000
362	**5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ**	
363	Բաշխիչ տուփ	0
364	Բաշխիչ տուփի խցուկ	0
365	Բաշխիչ տուփի առանցքակալ	0
366	Բաշխիչ տուփի ատամնանիվ	0
367	Բաշխիչ տուփի լիսեռ	0
368	Կարդանային լիսեռ	0
369	Էլաստիկ մուֆտ	0
370	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ	0
371	Կարդանային լիսեռի խաչուկ	0
372	**6. Առջևի և հետևի կամրջակներ**	
373	Հետևի կամ առջևի կամրջակ	0
374	Ռեդուկտոր	0
375	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ	0
376	Դիֆֆերենցիալ	0
377	Դիֆֆերենցիալի սատելլիտ	0
378	Տանող ատամնանիվի խցուկ	0
379	Տանող ատամնանիվի առանցքակալ	0
380	Դիֆֆերենցիալի առանցքակալ	0
381	Կիսաառնի	0
382	Կիսաառնու առանցքակալ	0
383	Կիսաառնու միջադիր	0
384	Կիսաառնու խցուկ	0
385	Կարգավորիչ տափողակ	0
386	**7. Կախոց**	

387	Տրավերս	0
388	Կրոնշտեյն	0
389	Ձախ կամ աջ հոդակապ	130,000
390	Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոց	18,000
391	Անվակունդ	0
392	Անվակունդի խցուկ	11,500
393	Անվակունդի ներքին առանցքակալ	42,000
394	Անվակունդի արտաքին առանցքակալ	0
395	Հետևի անվակունդի ներքին առանցքակալ	0
396	Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ	0
397	Ձախ կամ աջ հոդակապի խցուկ	9,000
398	Հարվածամեղմիչի թասակ	28,000
399	Զսպանակ	0
400	Առջևի հարվածամեղմիչ	90,000
401	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	15,000
402	Հարվածամեղմիչի վռան	0
403	Ներքևի լծակ	0
404	Ներքևի լծակի վռան	23,000
405	Վերևի լծակ	0
406	Վերևի լծակի վռան	0
407	Գնդե հոդակապ	23,000
408	Առջևի կայունարար	0
409	Առջևի կայունարարի վռան	9,000
410	Առջևի կայունարարի առջևի վռան	0
411	Հետևի զսպանակ	0
412	Հետևի ցնցամեղմիչ	85,000
413	Հետևի մետաղաձող (շտանգա)	0
414	Հետևի մետաղաձողի (շտանգա) վռան	0
415	Հետևի անկյունագծային լծակ	0
416	Անկյունագծային լծակի վռան	0
417	Զսպակ (ռեսսորա)	0
418	Զսպակի վռան	0
419	Զսպակի միջադիր	0
420	Զսպակի բռնիչ	0
421	Աջ կամ ձախ ձգան	28,000
422	Ծայրակալ	20,000
423	Ձգան մեջտեղի	0
424	Անվահեծ	0
425	**8. Ղեկային մեխանիզմ**	
426	Ղեկային կալուն	0
427	Ղեկային կալունի առանցքակալ	0
428	Ղեկային կալունի խաչուկ	95,000
429	Հիդրոուժեղարար	0
430	Հիդրոուժեղարարի փրտ	0
431	Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ	0
432	Հիդրոուժեղարարի պոմպ	0

433	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	0
434	Ղեկային ձող	0
435	Ղեկային ձողի ծայրակալ	0
436	Հիդրոուժեղարարի յուղ. 1 լիտր	6,000
437	Ճոճանակ	0
438	Ճոճանակի վոան	0
439	**9. Արգելակային համակարգ**	
440	Գլխ. գլան	0
441	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	0
442	Վակուումային ուժեղարար	0
443	Բանվ. գլան	0
444	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	0
445	Արգելակային փողրակ	0
446	Սուպպորտի ուղղորդիչ	7,000
447	Սուպպորտի մանժետ	0
448	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	63,000
449	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	45,000
450	Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ	0
451	Առջևի արգելակային սկավառակ	77,000
452	Հետևի արգելակային սկավառակ	75,000
453	Ձեռքի արգելակի ճոպան	0
454	ABS-ի տվիչ	0
455	Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրամ	3,000
456	Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ	3,000
457	Ձեռքի արգելակի ճոպան	0
458	**10. Էլեկտրասարքավորում**	
459	Գեներատոր	0
460	Գեներատորի դիոդային կամրջակ	35,000
461	Գեներատորի ռելե	40,000
462	Գեներատորի առանցքակալ	12,000
463	Ստարտեր	0
464	Ստարտերի ռելե	0
465	Ստարտերի ածուխ	28,000
466	Բենդեքս	35,000
467	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	30,000
468	Առջևի լապտեր	0
469	Առջևի թարթիչ	0
470	Հետևի լապտեր	0
471	Հետևի թարթիչ	0
472	Արգելակային լապտեր	0
473	Լամպ	8,000
474	Էլեկտրական անջատիչ	0
475	Էլեկտրական տվիչ	55,000
476	Էլեկտրական չափիչ սարք	0
477	Բռնկման կողպեք	0
478	Էլեկտրալարերի գլխավոր խուրց	0

479	Էլեկտրալարերի երկրորդային խուրց	0
480	Վառոցքային լարերի խուրց	0
481	Վառոցքի մոմի ծայրակալ	8,000
482	Վազքաչափ	0
483	Վազքաչափի ճոպան	0
484	Արագաչափ	0
485	Ազդանշան	0
486	Ապակեպվացիչ	11,000
487	Անվադողի վերանորոգում	0
488	Դռների կենտրոնական փական	0
489	Ազդանշանային համակարգ	0
490	Մագնիտոլա	0
491	Էլեկտրաամբարձիչ	0
492	Էլեկտրաամբարձիչի շարժիչ	0
493	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր գին 1դ/մ վերանորգման համար	1,000

* Ծառայությունները կմատուցվեն ըստ Պատվիրատուի պահանջի՝ Կատարողին պահանջի ծագման մասին տեղեկացնելու պահից 2 օրվա ընթացքում՝ առանց պահեստամասի փոխարինման ծառայության և առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ պահեստամասի փոխարինման ծառայության դեպքում:

** Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով տրամադրել տեղեկանք՝ Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայան ներկայացնելու օրվա և ժամի մասին:

*** Պարտադիր պայման՝ Ընթացիկ նորոգման համար անհրաժեշտ պահեստամասերի առկայությունը և չօգտագործված լինելը սպասարկման կետում պարտադիր է:

**** Տեխնիկական սպասարկման կայանը պետք է գտնվի Երևան քաղաքի տարածքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011024099
ՀԿՀՀ 02505854

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Գարանտսերվիս» ՍՊԸ
0052,ք.Երևան,Թբիլիսյան խճ 20
Բանկ: "Կոնվերսբանկ "ՓԲԸ
Հ/Հ 193004674290
ՀԿՀՀ '00840437

Տնօրեն Մ.Նիկողոսյան

(ստորագրություն)

Կ.Տ

00840437
«ԳԱՐԱՆՏՍԵՐՎԻՍ»
"ГАРАНТСЕРВИС"
"GARANTSERVIS"

Հավելված N 2
« 07 » 08 2019 թ. կնքված
«ՎԱՇՎՏՄ-ԳՀԾՁԲ-19/12-1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց առավելագույն վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111130/1	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	0	0	0	0	0	0	0	540000	540000	900000	900000	900000	900000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:
** վճարումը կիրականացվի փաստացի մատուցված ծառայությունների դիմաց

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ֆն գործառնական վարչություն
Հ/Հ 900011024099
ՀՎՀՀ 02505564

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Գարանտսերվիս» ՍՊԸ
0052,ք.Երևան,Թբիլիսյան խճ 20
Բանկ: "Կոնվերսբանկ "ՓԲԸ
Հ/Հ 193004674290
ՀՎՀՀ '00840437

Տնօրեն ____________ Ա. Երվանդյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«07» 08 2019 թ. կնքված
«ԿԱՇԿՏՍ-ԳՀԵՁԲ-19/12-1» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«07» 06 2019 թ. կնքված
«ԿԱՇԿՏՍ-ԳՀԾՁԲ-19/12-1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն